



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԳԱԶԱՆԾԵԱՆԻՆ
ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆԾԵԱՆԻՆ,
ԲԱՐԵՆՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱԽՏՐԱԼԻՈՅ
ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ, ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Գոհութիւն Ամենակալին որ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին իր հովանիին ներքեւ խաղաղ ու ապահով կը պահպանէ մեր հաւատաւոր պանդոխտ զաւակները ի սփիւռս աշխարհի, լուսաւորելով ու մխիթարելով անոնց հոգիները եւ մէկ ու անբաժան պահելով զանոնք՝ սուրբ Էջմիածնի աստուածային օրհնութեան ներքեւ:

Մենք յո՛ժ երջանիկ ենք, որ Զերդ Սրբազնութեան եւ եկեղեցական վարչութեանց ղեկավարութեան ներքոյ՝ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի հայ համայնքները արդէն հասած են աճումի եւ կազմակերպման արժանի մակարդակի մը, որ իր լրումին հասաւ մշակումովը Զեր թեմական կանոնադրութեան, որ վաւերացուեցաւ Մեր կողմէ յունուար 1967-ին ի գործադրութիւն:

Սոյն Մեր կոնդակով կը հաստատենք ստեղծումը Հայաստանեայց եկեղեցոյ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի թեմին, եւ համաձայն վերոյիշեալ Զեր թեմական կանոնադրութեան, զՁեզ կը կոչենք ստանձնելու նորաստեղծ վիճակի թեմակալ առաջնորդի պաշտօնը ստանձնելու նորաստեղծ վիճակի թեմակալ առաջնորդի պաշտօնը ստանձնելու նորաստեղծ ժողովորդը համաձայն մեր եկեղեցոյ կանոններուն, համաձայն Զեր թեմական կանոնադրութեան եւ Զեր բարեխնամ երկիրներու օրէնքներուն:

Սրտանց կը մաղթենք Ձեզի՝ անապատ ուժ ու եռանդ և սուրբ ներշնչումներ, Ձեր առաքելությանն ճանապարհին վրայ:

Թող Աստուած հաստատ, շէն եւ պայծառ պահպանէ Ձեր թեմը, իր եկեղեցիներով ու ժողովուրդով:

Հայրական սիրոյ ողջոյն եւ օրհնութիւն Ձերոյ Սրբազնութեան, թեմական-եկեղեցական վարչութեանց յարգարժան անդամներուն եւ համայն Սեր հաւատացեալ զաւակներուն:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցաւ ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանօրք եղերոք հաւատոցն» (Եբր. ԺԳ. 7):

Հարց Դ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոշաւ կոնդակս ի 15-ն յունուարի
1968 փրկչական ամի,
եւ ի տոմարիս հայոց ՌՆԺԷ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 880

